


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ՄԵՆ ՊԱՀՔԻ ԱՌԹԻԻ**

Մեծ Պահքի սովորութիւնը Քրիստոնէական եկեղեցիին կողմէն կազմակերպուած ջանք մէն է Յիսուսի քայլերուն հետեւելու: Այդ կարգադրութիւնը իր ներկայ ձեւը ստացած է Ն. զարուն մէջ. անկէ առաջ անոր տեւողութիւնը քառասուն օր կ'ըլլար, ի հետեւութիւն Յիսուսի քառասնօրեայ ծոմապահութեան:

Մեծ Պահքը իբր վերէն պարտադրուած ծոմապահութիւն օգտակար չի նկատուիր Աւետարանական եկեղեցիներու կողմէն: Բայց այն պաշտօնաբար եւ շաբաթափոխ, որուն տուն կուտայ նա՝ խիտ գնահատելի եւ օրինակելի է, այն է Յիսուսի նկատմամբ հարգանքի եւ անհրաժեշտ պայմանը եւ աներկբայ գրաւականն է դա: Քրիստոնէայ ըլլալ ոչ այլ ինչ է, բայց Քրիստոսի հետ հազորդակցութեան մէջ ապրիլ եւ անոր կեանքին օրինակին հետեւիլ: Քրիստոսի հետ հազորդակցութեան մէջ ապրելու համար պէտք է անոր ներկայութեան մէջ ապրիլ, այդ նպատակու էր որ նա տասերկու քրիստոնէական կանչեց (Մրկ. 3. 14.). պէտք է անոր հետ սերտ յարաբերութիւն մշակել, անոր ծունկերուն տակ նստիլ, անոր հետ շատ խօսիլ եւ աւելի շատ լսել անկէ: Այսպէս միայն կարելի է անոր կեանքին հազորդակցի ըլլալ, որ

կը նշանակէ անոր հետ համակիր, համախոհ եւ զործակից ըլլալ:

Քրիստոս առիկա պահանջեց իր աշակերտներէն. «Իմ անձն մեռնելու չափ արածում է», ըսաւ նա Գեթսեմանիի մէջ, «հոս կեցէք եւ ինձի հետ արթուն մնացէք»: Նա աւելի առաջ, ի տես իրենց անիմաստ փառասիրութիւններուն՝ տխուր շեշտով մը յիշեցուց իրենց, «Եւ դուք անոնք էք որ միշտ ինձի հետ կը կենալիք իմ փորձութիւններու մէջ»: Քրիստոս կ'ակնկալէ որ Քրիստոնէական իրեն հետ ինչպէս խնդակից՝ նոյնպէս ալ վշտակից լինի, հաւկընայ եւ մանաւանդ բաժնէ իր յուշումները եւ ցաւերը, հոգայ իր թագաւորութեան յոռաշփոթութեան համար, տառապի ի տես այն բոլոր խոթերուն որ կը ծառանան անոր առջեւ: Քրիստոնէական պէտք է ընկերակցի Յիսուսի ոչ միայն այլակերպութեան լիբան վրայ՝ այլ նաեւ Գեթսեմանիի պարտեզին մէջ եւ Գողգոթայի սարին վրայ: Պօղոս առաքեալ այդ պահանջը իբր շնորհ կ'ընդունէր. (Փղ. 1. 29):

Քրիստոս կ'ակնկալէ նաեւ որ Քրիստոնէական իրեն հետ համախոհ լինի. մեր համակրութիւնը իրեն հետ պիտի չըլլայ նման այն կարեկցութեան չոր մարդ մը կ'ունենայ իր բարեկամին հանդէպ, առանց հասկնալու աւոր տառապանքին բնոյթը եւ խօսական պատճառը, առանց բաժնելու անոր խեղճներն ու սկզբունքները: Կարելի չէ Յիսուսի կեանքին հազորդակցի ըլլալ առանց անոր խոր-

հուրդներուն և գաղափարներուն տիրանալու: Յիսուսի ընկերակցութիւնը, անոր հետ սերտ յարաբերութիւն և համակրանք ժամանակի ընթացքին Քրիստոնեան անոր հետ համախոհ կընեն: Այսպէս եղաւ առաքեալներուն համար: Ձեռնդէսի որդիները երբոր Տէրոջ աջ և ձախ կողմերը աթոռներ կը խնդրէին, և կամ երբ վրէժխնդրական ոգւով Սամարիացի գիւղացիները փճացնելու համար երկինքէն կրակ կը հրաւիրէին՝ շատ հեռի էին Յիսուսի հետ համախոհ ըլլալէ: Բայց անոնք շարունակեցին Յիսուսի հետ ապրիլ, համակրիլ անոր և կրթուիլ անկէ: Եւ ահա որոտման որդին Սիրոյ Առաքեալին վերածուեցաւ: Այդպէս նաև Քրիստոնէութեան զլխաւոր հաւածիչը կրնար վերջապէս ըսել. «Բայց մենք Քրիստոսի միտքը ունինք» (Ա. Կոր. 2. 16). Եւ այդ համակրանքն ու համախոհութիւնը վստահաբար Քրիստոնեան Քրիստոսի հետ զործակցութեան պիտի մղէ, որով հաղորդակցութիւնը կատարեալ պիտի ըլլայ:

Ու այդ բոլոր զործողութեանց ընթացքին և անոնց միջոցաւ Քրիստոնեան հետգհատէ Յիսուսի նկարագիրը պիտի զգենու և անոր փառաւոր նմանութեան պիտի փոխուի:

Ասոնք պէտք է կազմեն այն սակեղէն հանդրուանը, որուն մարնաւոր ջանքերով պէտք է որ ճգնինք հասնելու Մեծ Պահքի առթիւ: Եւ ի՞նչ միջոցներով:

Ա. Աւետարանիկ աւելի խորագնեմք և յարգալիր ուսումնասիրութեան: Թող ամէն մարդ մասնաւոր ժամանակ և ջանք նուիրէ առ այդ. այդպէս կարելի պիտի ըլլայ տեսնել Յիսուսը աւելի պայծառ լոյսի մէջ և հասկնալ զայն:

Բ. Անձնայինութեան: Թող ամէն անհատ Քրիստոսի լոյսին մէջ ջանայ տեսնել ինքզինքը, ոչ թէ ինչպէս սովոր էր խորհիլ ինք իր վրայ, ոչ թէ ինչպէս ուրիշներ կը կարծեն որ է, բայց ճիշդ այնպէս ինչպէս որ է, ինչպէս որ Քրիստոսի լոյսը կը յայտնէ զայն:

Գ. Ետիկոյ և Յիսուսի նմանելու որոշ քանիք ընկերով և հասարակ որոշումներ անցնելով:

Դ. Այոթի և հոգեւոր խորհրդածութեանց հասարակականութեան նմանութեան:

Եկեղեցիները մասնաւոր ժողովներով, և թերթի հոգեւոր զրուածներով կրնան շեշտել այդ ամենը և առաջնորդել հոգիներուն:

ՏԻԳՐԱՆ ԱՆԻՐԷԱՍԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԿՐԹԱԿԱՆ ՄԵՏ ՄՇԱԿԻՆ

Բրոք. Ա. Պեղճեանի,

իր մանուան ժե. տաղարձին առթիւ

Սրտատրոփ և երկիւղածութեամբ կը մօտենամ քրքրել քու աճիւններդ, նոր խանդ ու կորով ստանալու քեզմէ, որ կրցար աննկուն կամքով կերտել զարբնոց մը, անվեհեր հոգիներ, կորովալիք նկարագիրներ զարբնելու:

Ներէ՛ ինձ, երբ կը յանդգնեմ պահիկ մը անձանթ աշխարհի վարագոյրը վերցնել ու յաւիտենական հանգիստը խոռովել, նոր կայծիկ ստանալու քեզմէ, որ հաստատ հաւատքով տեսնուի ջանք եղար հիմնած վառարանիկ: Ներէ՛ ինձ, երբ անանցանիւ անջրպետին մէջէն կը ժպրհիմ գէպի քու բարձրութիւնդ սաւառնիլ քաղցած հոգիւս համար նոր ներշնչումներ ու անունդ քաղելու քեզմէ՝ մի՞ ծ սերմանողէդ, որ անչափ գուրգուրանքով կրցար անմահ բուրաստան մը ստեղծել:

Բայց ու՞ր է քու ձեռակերպը: Տեսուր խոհեր ու յուշեր կը պաշարեն միտքս: Այդ զարբնոցիկ մէջ ձեռառու հարուածներու թնդիւնները ա՛լ չեն լսուիր, լուծ է ան. այդ վառարանիկ ա՛լ կայծեր չ'արձակեր, խաւարը կը արիւն հոն, այդ բուրաստանիկ ա՛լ զաղրած է բոյր սփռելէ չորս կողմ:

Բայց ո՛չ, քու զործող անմահ է. ժամանակի աւերիչ վայրագութիւնները չեն կրնար մօտեցնել զայն: Քու ձեռակերպը, քու ձեռնասուն սաներդ, ցրուած ամէն կողմ, ինչպէս քու նշխարներդ տարտղնած օդին մէջ վայրագ ձեռքերով, պիտի շարունակեն զարբնել անտաշ հոգիները, շինելով զարբնոց հան՝ ուր կը գտնուին, պիտի շարունակեն հրահարել մարած սիրտերը, ըլլալով վառարանիկ իրենց զբոսնում աշխիւններում. պիտի շարունակեն բուրումնաւէտիլ ախտաժէտ մթնոլորտը, ըլլալով անուշահոտ ծաղիկներ իրենց գտնում վայրերում: Եւ մենք կը սփոփուինք, քանզի կ'զգանք թէ դուն կը հրճուիս, հոն վերը, անհուն խանդաղատանքով մը կը ժպտիս մեր ամպոտած հորիզոնին վերեւ, գիտելով քու հաւատարմիւ ձեռնասուններդ, որոնք քաջօրէն կը հետեին այն ճամբուն, որուն մէջէն դուն քաղեցիր անյոգողդ:

Ա.ՋԱՏ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Ա. Խոջիտոյ Մեկեմայ

Տօղթ. Պուշ և քեկերները հնարած են եւ լեքտրական մեքենայ մը, որ մարդկային ունէ ուղղիկն համար խիստ բարձր խնդիրներ կըրնայ լուծել: Այս մեքենական միտքը, որ մասնաւորապէս էլեքտրական հաշիւները գիտական ճշտութեամբ կատարելու համար հրնարուած է կրնայ ութ վայրկեանէն մինչեւ մի քանի ժամերու միջոցին լուծել այնպիսի խնդիրներ, որոնք ճարտարագէտի մը համար մէկ ամիսէն մինչեւ մէկ տարուայ զօրծ կը հաշթայթեն:

Բ. Մքնդորտեմ ինչէր կարելի է արտայրել

Ծովէն ու ջուրէն վերջ օդն ալ սկսած է բանալ իր զանաւարանը խուզարկու մարդուն տուէ: Գիտուններ կըրցած են մթնոլորտէն արտադրել քիմիական բաղադրութիւններ:

Վերջերս Ռուս երիտասարդ երաժշտագէտ մը իր կատարած փորձերով կը ցուցնէ թէ օդէն երաժշտութիւն ալ կրնայ արտադրուել: Այս երաժշտագէտը իր զգայուն մատերը օդին մէջ վեր վար շարժելով կրնայ մեծ վարպետներու երաժշտութիւնը վերարտադրել, պահանջուած թօնը, զգայուն մը և տարբերութիւնները արտայայտելով: Ան կը զործածէ մեծկալ սնտուկ մը որմէ կը բարձրանայ բարակ ճպոտ մը, և որ օծտուած է ձայն արտադրող մասերով, մի քանի թելերով և երկու բարձրախօսներով:

Գ. Նախապրատնական գերեզմաններ

Բերուի մայրաքաղաքին՝ Լիմայի մօտերը, Սփաֆօրտ անուն Ամերիկացի հնագէտ մը ասկէ հազարաւոր տարիներ առաջ ապրած մարդերու գերեզմանները գտած է, որ կծկած մոմիաներու շուրջ շարուած կուժերու մէջ ուտեւորեցիներ անփնտ պահուած կը ձեռնէին: Զարմանքով գիտուեցան հին հայահտաիկ, բաղլայ, պղպիկ պատիճներ, փաթաթեա և անուշ փաթաթէս: Գերեզմաններու մէջ նաեւ գտնուեցան կոշի (պալ գապաղը), զոլմի և կոկոշի ձեռով ամաններ: Ամաններէն մէկը հողագործութեան աստուծոյ պատկերը կը ներկայացնէր, որ իր մէկ ձեռքը ցորենի ցօղուն մը ունէր և զլխարկին շուրջ իր պսակ ցորենի հասկեր շարուած էին: Ուրիշ

ամաններու մէջ գեանապիստակներ ալ գտնուեցան: Մոմիաները շքեղ, գունաւոր կերպաներով փաթթուած էին, որոնց զոյները անագարտ մնացած են:

Այս գիւտը կը ցուցնէ թէ ամերիկեան երկրագործութիւնը ո՛րչափ բան կը պարտի այս բնիկներուն, որոնց նախահայրերը կարգ մը գիտուններու կարծիքին համեմատ ասկէ տասը հազար տարիներ առաջ Ասիայէն հոս գաղթած են: Ասոնք գտած են այն ծառը որուն կեղեւէն գինին կ'արտադրուի: Ասոնք գտան նաեւ ֆօս անուն բոյսը, որմէ կ'արտադրուի ֆօսայինը և գայն կը զործածէին իբրեւ յուշագրկիչ զեղ: Գրեթէ լոլոր մոմիաներուն վիզերէն կախուած են ֆօսայի տերեւներու տոպրակ մը, սովորութիւն մը զոր անոնց ներկայ սերունդը կը զործածէ յոգնութեան զէմ տոկալ կարենալու համար: Ասոնք առաջին անգամ սկսան օգտագործել ռետինը. գտան նաեւ փափօն և ուրիշ շատ մը օգտակար բոյսեր, որոնց համար աշխարհ երախտապարտ է այս նախապատմական բնիկներուն:

Դ. Պարսկաստանի Անգեալ Փառքը

Յայտնի գերման հնախօս Բրօք. Հէրձֆէլտ՝ նոր խուզարկումներ կատարեց Պերսեպոլիսի մէջ և հին կարծիքները հերքող յայտնութիւններ ըրաւ:

Շատ մը դարերու համար Պարսիկ աշխարհի փառքն է և պիտի մնայ Պերսեպոլիս: Աքրմենեան այս մայրաքաղաքը 200 տարիներ աիւրեց Ասիոյ մեծագոյն մասին Հնդկաստանէն մինչեւ միջերկրական: Աշխարհակալ Դարեհ հիմնեց զայն՝ 518 Ն. Ք. և իր որդին Բրսերքսէս գայն գարծուց ժամանակին հրաշակերտը:

Աւանդութեան համեմատ Մեծն Աղեքսանդրի փառասիրութեան չոհը եղաւ այն: Կըսուի որ այս վերջինը իր տարփածու Թալլի քմահաճոյքը յաղեցնելու համար գայն բոցերու յանձնեց:

Այսօր կը մեան սիւներու բեկորներ, որոնք կը յայտնեն պարսիկ ճարտարապետութեան նուրբ ճաշակը: Ուշագրութեան արժանի են Քսերքսէսի հրաշալի մէկ արձանը և պալատի դրան հսկող երկու հսկայ մարդագլուխ թեւաւոր ցուլերը: Պերսեպոլիսի հրկիզումը կը ցուցնէ հին աշխարհի մը կորուստը և նոր մշակոյթի մը սկզբնաւորութիւնը:

Քաղեց

Ա.ԶԱՏ

ՆԿԱՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ձեզի կ'ուզղեմ խօսքս, Հա՛յ ծնողներ. արդեօք գիտե՞ք ո՛րքան մեծ պատասխանատուութեան տակ կը գտնուիք. քանզի ձեր տան մէջ գտնուող այդ անուշիկ էակը, այդ դրախտային հրեշտակը որ անկարող է իր նրկարագիրը կազմելու, ձեր խնամքին յանձնուած է: Դուք էք այդ անխօս, մուշկ էակին նկարագիրը կերտող անձնաւորութիւնները և զուք պատասխանատու էք ձեր մանուկներուն նկարագրին: Դուք՝ սահմաններ, խնամողներ ըլլալով պէտք է որ այդ մոլորած խորխորով մանուկներուն ձեռքերէն բռնելով գանձնաւորութիւնը իրենց նկարագիրը կազմելու մէջ:

Մանուկը իր մէջ ունի օրինակելու, նմանցնելու մեծ կարողութիւն մը, որուն միջոցաւ պիտի կերտէ իր նկարագիրը: Ան կ'օրինակէ ինչ որ կը տեսնէ ու կը լսէ. երբ դուք ժպտիք, մանուկը անզգալաբար և փոկազարծաբար կը ժպտի ձեր դէմքին: Երբ դուք լաք, մանկան դէմքին վրայ վիշտի գիծեր կ'երևան և կ'սկսի լալ: Մանուկը ձեր ընտանիքին հայելին է: Հոս ծնողաց համար սուրբ պարտականութիւն մը կայ ընելիք, այնպիսի կենսական պարտականութիւն մը, որ այդ մանուկը մեծցնելէն և հողալէն աւելի վեհ և կարեւոր է:

Դուք պէտք է բարձր միջավայր մը ըստեղծէք ձեր մանուկներուն համար, պէտք է

ձեր գերազոյն կեանքով ապրիք և պէտք է անոնց ջինջ և պայծառ հոգիներուն մէջ ներշնչէք ձեր հայրենասիրական ազգասիրական և կրօնական վեհագոյն զգացումները և պէտք է անոնց առջեւ պարզէք բարիի և չարի, զեղեցիկի և տգեղի տարբերութիւնները: Եւ մանաւանդ պէտք է անոնց առջեւ ձեր կեանքերով կենդանի կերպով ցոլաւնէք Յիսուսի կեանքը: Ահա այս է ծնողաց պարտականութիւնը իրենց մանկանց նկարագիրը կերտելու մէջ: Իրենց պարտականութեան հաւատարիմ գիտակից ծնողքներ չեն թերահար իրենց այս կենսական պարտականութիւնը կատարելու մէջ:

Եւ ահա այդ մանուկ էակը՝ ազդուելով այս վեհ միջավայրի ազդեցութիւններէն, կամ աւելի շիտակը օրինակելով ձեր վեհ վարքն ու բարքը, ձեր բարձր կեանքը և գերազոյն ըզգացումները՝ հանդէպ ձեր ազգին հայրենիքին և կրօնքին, պիտի կերտէ իր մէջ վեհագոյն և գերազոյն նկարագիր մը: Ձեր այդ սուրբ ծած միջավայրին ազդեցութիւնները, ձեր ներշնչած զգացումները, մէկ խօսքով ընտանեկան կրթութիւնն է որ կը կազմէ մանկան նկարագիրը: Դուք իրաւունք չունիք ձեր զաւակներին յուսադու այն նկարագրի, որ դուք չունիք եւ նկատաբար չիք կրնար տալ:

Յ. Կ. Շ.

«ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ»ԻՆ

Ողջոյն քեզ, ո՛վ սիրելի «Նոր Աւետարեր»,
Մեր մաքերուն բուրումնաւէտ զու խնկարան,
Հազար փա՛ռք որ դու իրբեւ ջահ մը լուսարեր,
Պիտի ըլլաս ճըրագ մ'անշէջ, սուրբ վառարան:

Նժգեհ մը չես, ոչ ալ օտար մեր տուններուն,
Հին օրերու սերտ բարեկամ մեր ալեհեր,
Սակայն ունիս պատգամներ նոր հէք սրտերուն,
Փոխել, սրբել մեր հոգիներն ալ կարեւոր է:

Կարեկցօրէն նոր քայլերով ա՛լ յուսարեր
Կ'այցեղես մեզ բուժել սրտերն մեր սգաւոր,
Իսկ կ'աղօթենք մենք որ դու «Նոր Աւետարեր»,
Բերես մեզի հեղեղօրէն լոյս և կեանք նոր:

Քիսապ-Քիօրթնի

Ա. Կ. ՊէրՊէրեԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայկոյ Այիդիէ Հայ Աւետ. եկեղեցիի սը-
րահին մէջ, Յունվ. 15ին, տեղիս երկու Հայ
Աւետ. եկեղեցիներու Մանկանց Կ. Գարոց-
ներուն երկսեռ աշակերտութիւնը մասնաւոր
հաւաքոյթ մը ունեցաւ: Հակառակ պաղ օ-
ղին և ձիւնին 300էն աւելի մանուկներ փու-
թացիւր էին երջանիկ պահ մը վայելելու աչդ
տաք մթնոլորտին մէջ: Տիկ. Ի. Մէրիւ հա-
յերէն լեզուով և շատ հաճելի կերպով խօսե-
ցաւ թէ ինչպէս Ծնունդի տօնին նոյնէր տալու
սովորութիւնը ծագում առած է, և միեւնոյն պը-
տիկ հոգիները նուիրումի ողին մշակելու:
Այս երկու քոյր եկեղեցիներու պատիկները
շատ լաւ տպաւորուեցան տիրոջ մտերմական
սփիւն:

Վեր. Ս. Մանուկեան, որ Ծնունդի եւ
նոր տարուան ասթիւ շրջան մը բնա Գրքը
Խան և Սուէյթիյէ, կը տեղեկացրէ:

Գլխաւոր իմաստի մէջ 1927 Գեղ.ի վերջին շա-
բաթը աղօթածոյններ կատարուեցան: Ս.
հաղորդութիւն կատարուեցաւ և երկու նոր
անգամներ ընդունուեցան: Ներքին աւետա-
րանչութեան համար 15 մէճիտ հանգանակ-
ուեցաւ: Պատ. Կ. Գրքեաշարեան յետ այսու
երկու շաբաթ Գրքը Խան պիտի գործէ՝ և մէկ
շաբաթ Պէյլան: Իր բացակայութեանը միջո-
ցին հոգևոր եղբայրները պաշտամունք կը
կատարեն:

Պիթիախի մէջ նոր տարուան առաջին շա-
բաթը և Ծնունդին՝ այցելութիւններ կատա-
րուեցան: Շատ քաջալիւրի է Ս. Բ. Զանից
Միութեան գործունէութիւնը, այս վերջինը
զեղեցիկ ներկայացում մը ցուցադրեց:

Մանկանց Կ. Գարոցը եկեղեցիին մէջ հան-
դէս մը տուաւ: Կանանց մասնախումբ մը
կազմուեցաւ կիներու մէջ գործելու համար:
Յունվ. 4ին Ս. հաղորդութիւն կատարուեցաւ
և 12 պատիկներ մկրտուեցան: Պատ. Կ.
Գրքեաշարեանի բացակայութեանը միջոցին
եկեղեցական ժողովը ստանձնեց միշտ եկեղե-
ցիին մէջ պաշտամունք կատարելու պատաս-
խանատուութիւնը:

Էփիւ-Քիօիսի, նախկին Թրքարնակ զիւ-
ղը, Պիթիախէն մէկ ժամ հեռու, ծախս. առ-
նուելով տրամադրուեցաւ Զէյթունցի գաղթա-
կաններուն, որոնք 4 ամիս առաջ սկսան հոն
տեղափոխուի: Ներկայիս 115 հոգի կամ 32

ընտանիքներ հաստատուած են հոն: Ընտա-
նիք զլուս երեք Օսմ. ոսկի տրուած է տու-
ներու շինութեան համար, երկու արօր և 4
ընկաններ արուած բոլոր զիւղին: Ընտանիք
զլուս երկու քահան սկի բաշխուած է իրենց
սեպհական արօրները ունենալու: Յետ աշ-
տու ամսական մէկ ոսկի պիտի վճարուի իւ-
րաքանչիւր ընտանիքին: Տիար Թորոս Մէր-
կէնեան անձնուէր հոգիով կ'աշխատի իր հայ-
րենակիցներուն համար, իր անիւր Մանուկ
աղա Սանգիկեան, նախկին հարուստը, հօր
մը զուրգուրանքը կը տածէ ամբողջին հան-
դէս: Տիար Մ. Գալուստեան կը հսկէ բոլոր
վերահաստատման գործին:

Սուրբոյ Հայ Աւետ. եկեղեցիներու Մի-
ութեան գործադիր ժողովը կը հրաւիրէ եկե-
ղեցիները, որ զրկին իրենց պատուիրակները
տարեկան համագումար ժողովին մասնակցե-
լու, որ տեղի պիտի ունենայ Հալէպ և պիտի
սկսի իր նիւտերուն 11 Ապրիլ, 1928ին:

Ի ԴԻՄԱՅ ԳՈՐԾԱԴԻՐԻ
Ա. ՊԵՏ
Կ. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Ստացանք Տիար Յ. Սարգիսեանէ, Աղէք-
սանդէթ, 20 մէճիտ, 10 բաժանորդագրինե-
րու գումարը:

Մէկ տարուան նոր Աւետարներ կը նու-
րեն:

Վեր. Ս. Մանուկեան, Տօքթ. Մանուկ-
եանին, Պիւքէնթա. Տօքթ. Գ. Հեռանտեա-
նի, Տէր-Զօր. Տիար Բ. Մանուկեանի, Պու-
էնօն-Այրէս:

Պատ. Լ. Ղազարեան՝ Վեր. Պետրոս Դա-
ւիթեանի, Սէլանիկ. Տօքթ. Հ. Պ. Գազան-
ճեանի, Լօրէնս, Մ. Ն. Ա.:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹԻ

ԿԻՐԱԿԻ. Տեղոյ օրհնքը. Սաղ. 19.7-9:

Տէրոջ օրէնքին պատուական յատկու-
թիւններուն մասին հրէք խորհած ես: Փոր-
ձով զիտեմ թէ անոր վկայութիւններուն,
կանոններուն, դատաստաններուն համեմատ
ապրելով մարդ ո՛րչափ ուրախ, իմաստուն,
օգտակար և բարի կրնայ ըլլալ, բնա ո՛րչափ
կը թեթեւայ, պարտականութիւնները կա-
տարի ո՛րչափ քաղցր կըլլայ:

Աղօթք. Ո՛վ Աստուած յաւիտենական, սը-
րէ՛ մարմինս, հոգիս, խորհուրդներս, զիտու-

ւորութիւններս, խօսքերս զործերս, որպէսզի խորհուրդս, խօսքս զործս քու փառքիդ համար ըլլան: Ամէն:

ԵՐԿՈՒՇԱՐԹԻ: Առաստաղես ևնում. Ես 55. 1-3, 6-7:

Ո՛վ մեղաւոր, իթէ դեռ ապաշխարած չես լսէ Աստուծոյ մարդարէին ձայնը, որ կըսէ, զարձի՛ր, ապաշխարէ՛ ճամբադ ուղղէ՛ Այն քեզի կ'ողորմի, իթէ ապաշխարած եւ նորէն ինկած ես, զարձեալ Տէրոջ եկուր, քանզի Այն շատ ներողամիտ է:

Աղոթք. Երկնաւոր Հայր, սիրովդ վառէ մեր սիրտերը, որ մեր անձերը քեզի յանձնենք ամէն բանի մէջ, ուսուցուր մեզի թէ ի՛նչպէս կրնանք մեր միաքերը հանդարտ պահել: Ո՛չ բարձրութիւն, ո՛չ խորութիւն, ո՛չ ներկայ եւ ո՛չ զաւիթ բաներ մեզ քեզմէ հեռացնելու կարող չըլլան: Յանուն Յիսուսի: Ամէն:

ԵՐԵՔՇԱՐԹԻ: Դեռ ֆեզի ևն. Սաղ. 139. 1-6, 17-19, 23.24: Ամէն աւաւտ մեր քունէն ապահով կ'արթնանք, քանզի Տէրը միշտ արթուն է եւ մեր վրայ կը հսկէ: Սակայն, արդեօք ամէն աւաւտ քու խորհուրդներդ Տէրոջ վրա՞յ է, իթէ այսպէս է, ամբողջ օրը Աստուծոյ վառովը պիտի անցնես եւ Անոր առջեւ մաքրութեամբ եւ ճշմարտութեամբ պիտի անցնես:

Աղոթք. Ո՛վ Տէր, օգնէ՛ ինձ, որ ասկէ ետքը հարստութիւն չի փնտռեմ, առանց զանկայ քեզի համար, քեզմով եւ քու մէջդ զործածելու: Միայն դուն գիտես թէ ինչ բան ինձի համար բարի է: Այս աշխարհի բարեքները կուզես ինձ տուր, կուզես ինձմէ առ. միայն իմ սիրտս քու մէջդ հանդի, եւ նախախնամութիւնդ ինձ առաջնորդէ: Ամէն:

ՉՈՐԵՔՇԱՐԹԻ: Նեղութեան ստեղծ լիւթաւորքիւն. Սաղ. 42. տառապեալ հոգի, կ'ուզե՞ս զանդաւանդէդ ազատիլ եւ միխթարութիւն զանել, փոխանակ քու նեղութիւններուդ եւ թշնամիներուդ վրայ խորհելու, Աստուծոյ ուշորմութիւններուն վրայ խորհէ: Երբ քու կեանքդ գէպի Աստուծոմ շարժի, հոգիդ կը հանդարտի, երբ Անկէ հեռանաս խաղաղութիւնդ կը կորսնցնես: Ո՛վ մոլորեալ հոգի, Տէրը քեզ կը փնտսէ, Անոր գնա՛ եւ միխթարուէ:

Աղոթք. Ո՛վ իմ Աստուծոմ, շատ անգամ ներ մեր ճամբան մութ է եւ մենք տուենէն

հեռի էնք: Սուրբ հոգիդ մեր ճամբաները թող լուսաւորէ: Յայտնէ քու փառքդ մեզի, որ քեզի առաջնորդող ճամբան գտնենք: Քու ներկայութիւնդ մեզի միշտ զգալ տուր: փառքիդ համար: Ամէն:

ՀԻՆԳՇԱՐԹԻ: Տեղը փաղքաքիւնը: Սաղ. 103. 15-18, 20-22: Տէրը իր քաղցրութիւնը կը յայտնէ մեզի մեր տկար եւ վաղանցիկ կեանքը խնամելով, մեզի յաւիտենական խոստումներ ըն՛ւլով, եւ իր նախախնամութիւնը շարունակելով: Ինք կը փրկէ մեզ, Ինք կը կառավարէ մեզ, Ինքն է մեր ժառանգը, Ինքն է մեր օրերը ուրախութիւնով պսակողը: Իր ողորմութիւնները մեզի համար միշտ անպակաս են:

Աղոթք. Ո՛վ տէր, մեր սիրտերը խիստ շատ անգամ կը խռովին: Ներկայութեամբդ հանդարտեցուր մեզ: Մեր հոգիները քեզի կ'անձկան, թող Յիսուսի սէրը մեզ սւելի մաքուր, սիրուն եւ ընդունելի ընէ քու առջեւ: Փառք քեզ: Ամէն:

ՈՒՐԲԱԹ: Երկրի աղը. Մատթ. 5.13-16: Յիսուս այնպէս կարգադրեր է թէ աշխարհ, մարդոց մէջ հաճութիւն հաստատելու համար իրենք գիրենք նուիրող մարդոց միջոցաւ Աստուծոյ բերուի: Երկնից թաղաւորութիւնը ասոնց միջոցաւ երկրի վրայ հաստատուի: Այսպիսիներ են երկրի աղը: Ասոնք մարդկութիւնը փոութենէ պիտի պահեն: Ասոնք ատոապեալներու մոլորեալներու համար խաւարի մէջ լոյս պիտ'ըլլան: Դուն անոնցմէ՞ ես:

Աղոթք. Օրհնեա՛լ Որդի Աստուծոյ, կ'աղաչեմ օգնէ՛ քու աշակերտներուդ եւ հաւատացեալներուդ, որ օւրիշները զայթակղեցնելով թաղաւորութեանդ արդեւ չըլլան: Անտարբերները արթնցուր, ինկածները վերջուր, վախկոտները քաջաւերէ, մոլորածները ետ գարցուր, աղէտները կրթէ, փրկութեանդ ճամբան ամբողջ մարդկութեան սորվեցուր: Արեւոյդ համար: Ամէն:

ՇԱՐԱԹ: Վասնորքիւն Քրիստոսի Զորութեան Մասք. 8.5-13: Դայէ, հեթանոս մը, Հոովմայեցի հարիւրապետ մը կը հաւատայ թէ Յիսուս բնութեան տէրն է, Աստուածային զօրութիւն ունի, հիւանդ մը հեռուէն միայն խօսքով կրնայ բժշկել, դուն ունի՞ս Յիսուսի զօրութեան վրայ այս փտահութիւնը, կը հաւատամ թէ Անիկա քեզի համար բուսկան է

ամէն ներութենէ քեզ փրկելու, և ամէն կուսութիւններէ լեցնելու:

Այոք. Տէ՛ր Աստուած մեր, շնորհք տուր մեզի որ մեր բոլոր սրտովք քեզ փնտռենք և երբ որ զանեմք քեզ, սիրենք և ծառայենք մեր ամբողջ կուսեամբը և ասենք մեզքը, որմէ զուէն մեզ ազատեր ես: Բու պատուական անունովք: Ամէն:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՅԻՍՈՒՍ ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԿՍԻՈՐՈՒԹԵԱՆ
ՊԱՏԿԵՐԸ ԿՐ ԳԾԷ

Մարկ. 1. 14, 15, 4. 1-34

Փետրուար 19

Յաւակալի՛ծ, 1) Յիսուսի պատգամը (1. 14-15): 2) Թագաւորութեան մասին շատերուն մէջէն ընտրուած երեք առակներ (4. 1-9, 26-29, 30-34): 3) Առակներէն մէկը կը բացատրուի աշակերտներուն (4. 10-20): 4) Ուշագիւր ունկնդրելու մասին ուրիշ հրահանգներ (4. 21-25):

Խորհրդածութիւնք. 1) Յիսուսի համար թագաւորութիւնը հետաքրքրութեան առարկայ նիւթ մ'էր: Ի՞նչ պատգամը բարի ըլլալու վերայ չէր, այլ Աստուծոյ շնորհքին վրայ: Ան փափաքեցաւ որ ամբողջը ծանօթանան աւուր: 2) Յիսուսի ուսուցումը նպատակի համար միջոց էր, ո՛չ թէ ինքնին նպատակ մը: Իր նշագատակին հասնելու համար ոչ միայն պէտք էր անոնց տկանջները զրաւել, այլ առնուազն պէտք է ապահովէր անոնց հետաքրքրութիւնը և յիշողութիւնը և եթէ կարելի է հասկնալու կարողութիւնը: Այս երեք առակներուն նիւթը կը կազմեն կարգով, չորս տեսակ հոգի, հոգին բնական բերրութիւնը, շատ պշտիկ սերմէ մը զարմանալի ուսման ուժ. 3) Յիսուս առակները իր աշակերտներուն բացատրեց (4. 34): Ան մասնաւորապէս ուզեց որ անոնք հասկնան, քանզի զանոնք մարդու սրտով ըլլալու համար կը պատրաստէր (1. 17): 4) Մտիկ ըրէ, երբ Յիսուս կը խօսի, Ան մինչև հիմա չըսուած բաներ կը պատմէ: Հոգեւոր բաներու հասկացողութեան մէջ քու մեծնալդ ասկէ կախեալ է:

Դասեր. 1) Այն կերպը որով կը լսենք կը յայտնէ մեր նկարագիրը, այս կերպը կ'որոշէ մեր բախտը: 2) Հոգեւոր մշակ մը պէտք է ար-

դիւնքներ արտադրէ: Յիսուս արդիւնարեր ուսուցիչի մը մէկ օրինակն է: Ան յառաջ բերաւ հետաքրքրութիւն, յիշողութիւն, հասկացողութիւն և զործունէութիւն: Ամէն մէկ քարոզ, ամէն մէկ աղօթածողովի նիւթը, իւրաքանչիւր դաս պէտք է ունենայ նպատակ մը և անոր հասնելու համար մէթոտ մը:

ՈՅԺԻ ԵՐԿՈՒ ՀՐԱՇՔՆԵՐ Մարկ. 4. 34-5.

Փետրուար 26

Այս և յաջորդ դասերը կը նույնն թէ ինչպէս Յիսուս յուսահատական կացութիւններու մէջ հեղինակութիւն և ոյժ զործածեց, երբ ուրիշ ոյժեր աւերում կը զործէին: 1) Ֆիզիքական վտանգ (4. 35-41). մտային խանգարում (5. 1-20):

Խորհրդածութիւնք. Մատթէոս, Մարկոս և Դուեառ նոյն զէպքերը կը պատմեն. առաջինը իրր աղանատեա, երկրորդը՝ Պետրոսէն քաղելով և Դուեառ իր պրպտումներուն իրր արդիւնքը:

Ուշագրութեան արժանի գլխաւոր կէտը Յիսուսի ոյժն է: Բայց այսօր բնթերցողներէն շատերը նկատի կ'առնեն երկու ուրիշ բաներ: 1) Հովերը հրամանի մը կը հնազանդին, բայց հովերը բնական օրէնքներուն տակ չեն: 2) Պիղծ ոգիները հրաման կ'ստանան մարդը ձգելու և կենդանիներու մէջ մըտնելու կը թոյլատրուին. բայց չար ոգիներ կա՞ն երբէք: Բնական օրէնքը ոյժ մը չէ, այլ կերպ մը որով ոյժը կը զործէ: Ամէն օր մարդիկ կը կառավարեն բնական օրէնքներով զործող ոյժերը: Ինչո՞ւ Յիսուս մեզի անհասկնալի կերպերով չկառավարէ զանոնք: Գալով պիղծ ոգիներուն, անկարելի է ըսել թէ տիեզերքի մէջ կամք ունեցող միակ զոյնութիւնները տանք են որ մարմնական աչքերուն տեսանելի են. Պետրոս և Պօղոս ասոր համոզուած էին (Ս. Պետ. 5. 8, Հոովմ. 16. 20, Եփս. 6. 12):

Յիսուս սորվեցուց իր աշակերտներուն աղօթել այսպէս, «Ապառէ՛ մեզ չարէն», և Ան աղօթեց որ անոնք չար եղողէն ազատ մնան (Յովհ. 17. 15):

Դասեր. Կարեւոր կէտը այս է, միաքը, մարմինը և հոգին աւերող ամէն ոյժէն ազատ պահել: Այս դասը կը սորվեցնէ թէ Յիսուսի նպատակն է և կարող է մարդերը այս ոյժերէն ազատել: Ան կուզէ որ մենք հաւատանք

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՁԸ

Թիւ 6 հանելուկին պատասխանն է
Յոխիկիմ

Լուծողներն են,
Լուսու Յարութիւնեան
Թորոս Լոշխաճեան
Փօլ Հաւարճեան
Լեւոն Պապիկեան
Լուսին Պալեօղեան
Խաչատուր Խաչատուրեան
Իւլզանդ Ինկիլիզեան

ԹԱՒԱԴՈՐԻՆ ՆԵՐՈՒՄԸ

Ծնունդի գիշերն էր, քամին կ'ոռնար, բութ էր կ'իջնէր ու սաստիկ մութ էր: Հիւսիսային Անգլիոյ անտառներէն միոյն մէջ կորսուած խրճիթի մը ներսը միւս միւսակ նստած Մարիա Լուսիկ կը մտածէր: Խրճիթի մէջ իրմէ վատ մարդ չիկար ու Մարիա շատ կը վախնար, չէ՞ որ անտառը լի էր վայրի զազաններով, որոնք գիշերները որսի կ'ելլէին: Խրճիթին մէկ անկիւնը ծառերու չորցած ճիւղերով կրակ մը կը վառէր, ու կրակին վրայ փոքր ամանի մը մէջ ապուրը կ'իփէր: Մարիա հազիւ կը համարձակէր շարժելու, ու զգալով մերթ քնդ մերթ կը խառնէր կերակուրը: «Հայրիկը շատ ուշացաւ այսօր», կը մտածէր ան ու քաջութիւն չունէր հիւզակին միտակ պատուհանէն դուրս նայելու զէպի խառնուրդ անձանոթ: «Շատ յոգնած պիտի ըլլայ, ու շատ անօթի երբ որ գայ», կը խորհէր, ու կը խառնէր ապուրը՝ որ եփած էր այլ հս:

Մարիա գիւղիցիկ էր, կապոյտ աչքերով,

ու երկայն առատ մազերով, ան տառնչորտ տարեկան էր, լման չէր կրնար ըմբռնել թէ այդ ահարկու վայրէն քամիին ձայնն էր, թէ կատաղի կենդանիներուն մոնջիւնը, թէ անտառի յաւերժահարսերու աղաղակը: Ան հաւատարապէս կը վախնար ամէնէն ալ:

Յանկարծ ամբողջ անտառը թնդաց պալարափողի մը ձայնովը, որուն արձագանգը կրկնուեցաւ անտառին խորերը: Մարիա վարհուրեցաւ, ան որսորդներէն ալ կը վախնար, ու այս փողին ձայնը նշան էր թէ որսորդներ կային անտառին մէջ:

Մարիա երկու ձեռքերովը երեսը զոցեց, ու իր մօրը սորվեցուցած ազօթքը սկսաւ խօսիլ առանց ձայնի: Ա՛խ, որքա՛ն դժուար կ'անցնէին վայրկեանները ու հայրիկը ինչո՞ւ կ'ուշանար:

Հազիւ Մարիա իր ազօթքը լմնցուցած էր՝ երբ խրճիթին դուռը բացուեցաւ, ու յիսունը անցած, զօրեղ կապուտած քով, քիչ մը կորաքամակ, թուխ ու մազոտ գէմքով, պատուաւ զգեստներով գիւղացի մը երեցաւ սեմին վրայ: Ան իր կանակին վրայ նոր որսացուած եղնիկ մը ունէր, ու շատ յոգնած էր:

«Ո՛հ, հայրիկ», զոցեց Մարիա, որովհետեւ եկողը հայրն էր, «Սիրելի հայրիկ, որքա՛ն ուշացար այսօր, և որքա՛ն ուրախ եմ որ վերջապէս եկար, և միշտ քու վրայովդ կը խորհէի, դուրսը շատ ցուրտ է, և խիտ մութ, լսեցի՞ր այդ փողին ձայնը, քեզի համար շատ վախցայ, հայրիկ, արգիօք տեսա՞ր այդ որսորդը:

(Շարունակելի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մեծ Պակի Սոքիւ ՎԵՐ. Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ
ՅՕԴՈՒՍԾՆԵՐ

Կրքակում Մեծ Մշակիկ ԱԶԱՏ

Գիսակում Քրոնիկ ԱԶԱՏ

Նկարագրի Կապուրթիկ Յ. Կ. Շ.

Նոր Աւերակիկ ՊԱՏ. Ա. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱԶՕԹԻ

ԿՐԱԿԱՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ ԴԱՍ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՁԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, Գիտական, Կրթական երկշաբաթաթերթ:

Արտօնատէր, ՎԼԻ. Կ. Յարութիւնեան
Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. Խըրլորեան
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Սուրբ Կամար տարեկան 2 Մէճիտ

Արտօնատէր » » 1 Տոլար

Հասցէ—

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP, SYRIE